ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑԸ

24.11.2017 14:37

2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի և Եվրոպայի խորհրդի HELP (Իրավունքի ոլորտի մասնագետների ուսուցում մարդու իրավունքների վերաբերյալ) ծրագրի հետ համագործակցության շրջանակներում Փաստաբանների պալատում մեկնարկել է «Ընտանեկան իրավունքը և մարդու իրավունքները: Երեխաների և մեծահասակների իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները» թեմայով փաստաբանների համար նախատեսված հեռավար դասընթաց: Դասընթացի նպատակն է ընտանեկան իրավունքի վերաբերյալ ներպետական և միջազգային պրակտիկայի համատեղ քննարկումը, դերաբաշխման միջոցով ՀՀ և ՌԴ փաստաբաններին միևնույն խնդրահարույց դատական պրակտիկային անմիջական մասնակից դարձնելը և ուսումնական հարթակում երեխայի լավագույն շահի պաշտպանության համար ստեղծված մարզող դատախաղին մասնակցելը:

Դասընթացի մեկնարկին բացման և ողջույնի խոսքերով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

Ողջունելով միջոցառման իրականացումը՝ Արա Զոհրաբյանը նշել է, որ ընտանիքը բոլոր երկրներում՝ անկախ ազգային ավանդույթներից և սովորույթներից պետական պաշտպանության ներքո է և այս առումով անձի համար կարևոր նշանակություն ունի ընտանիքի ինստիտուտը: Նա հիշեցրել է Փաստաբանների պալատի ակտիվ արձագանքը Ընտանիքում բռնությունների կանխարգելման վերաբերյալ օրինագծի քննարկման հարցում՝ հավելելով, որ ընտանիքում բռնություններն ունեն իրենց առանձնահատկությունները, դրանց վերացման գործիքները՝ նույնպես: Արա Զոհրաբյանը նշել է, որ բռնությունների վերացման հարցում այնպես պետք է գործել, որպեսզի ընտանիքը չվնասվի: Նա հաջող աշխատանքային օր է մաղթել դասընթացի մասնակիցներին:

Նատալյա Վուտովան անդրադարձել է Հայաստանի և Ռուսաստանի փաստաբանների պալատների միջև ձևավորված գործընկերային կապերին՝ ինչի արդյունքում հնարավոր է դառնում նմանատիպ ծրագրերի իրականացումը: Ընտանեկան իրավունքի միջազգային ասպեկտները հիշատակելով՝ Եխ երևանյան գրասենյակի ղեկավարը շեշտել է այս դասընթացի շրջանակներում ՄԻԵԴ պրակտիկայի ուսումնասիրման հնարավորությունը:

Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն անդրադարձել է HELP ծրագրի հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտությանը՝ հույս հայտնելով, որ դասընթացի արդյունքները կլինեն դրական: Նա խոսել է Սահմանադրությամբ ՄԻՊ-ին վերապահված նոր իրավունքից ՝ Մարդու իրավունքների վերաբերյալ կրթություն իրականացնելու գործառույթից: Նա կարևորել է փաստաբանների դերը ՄԻՊ աշխատակազմի հետ համագործակցության տեսանկյունից, նշելով, որ առանց փաստաբանների հետ արդյունավետ փոխգործակցության զգալիորեն կդժվարանար ՄԻՊ աշխատակազմի աշխատանքը:

Ներկայացվել է նաև Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի նախագահ Յ.Պիլիպենկոյի ողջույնի խոսքը: Պարոն Պիլիպենկոն նշել է, որ ՌԴ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանների պալատի համագործակցությունը ձևավորվել է վաղուց և շատ հաջող, իսկ նոր նախագծի իրագործումը հնարավոր է դարձել Փաստաբանական գործունեության հիմնարար սկզբունքների վերաբերյալ 2016թ. մայիսի 19-ին ստորագրված խարտիային հայկական և ռուսական փաստաբանության մասնակցության շնորհիվ:

Վերապատրաստման հեռավար դասընթացը զուգահեռաբար ընթանալու է նաև Ռուսաստանի Դաշնությունում և երկու երկրի 30 փաստաբան տեսակապի միջոցով իրական ժամանակահատվածում համատեղ իրավական վարժանքների են մասնակցելու: Դասընթացի տևողությունը 3 ամիս է, վերջնարդյունքն ու ամփոփումը

նախատեսվում է իրականացնել Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանում: Դասընթացի ավարտին փաստաբաններին հանձնվելու են հավաստագրեր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })